# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 30

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 10 նիստի օրակարգը:

2. Նոր Խարբերդ համայնքում 2018 թվականի տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին:

3. Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Նոր Խարբերդ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

5. Նոր Խարբերդ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

6. Հողամասերը օգտագործման տրամադրելու մասին:

7. Հողամասերը օտարելու մասին:

8. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ

7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ

8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

9. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է.***

Նոր Խարբերդ համայնքում 2018 թվականին սահմանել տեղական տուրքեր և վճարներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ՁՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ՁՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի
թիվ 31-Ն որոշման

*I. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2018 թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝ գոտիավորման սկզբունքով.*

Գոտիավորել Նոր Խարբերդ համայնքի վարչական տարածքը և գոտիավորման արդյունքում՝

ա/ Երևան-Արտաշատ խճուղին համարել 1-ին գոտի/,

բ/ 1-ից մինչև 38 փողոցները համարել 2-րդ գոտի:

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝.
հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.
բբ/ 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000 դրամ.
բգ/ 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000 դրամ.
բդ/ 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝100.000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.
դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ:

*1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, նթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում շենքերի գործառնական նշանակության փոփոխություն.

ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

*1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:*

*1.4. Համայնքի վարչական տարածքի 2-րդ գոտում ոգելից և ալկոհոլային խմիչքի թույլտվության համար և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար 0.3 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝*

1/ ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.500 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.500 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.500 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.500 դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 13.500 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20.500 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.500 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.500 դրամ:

*1.5 Համայնքի վարչական տարածքի 1-ին գոտում 0.75 գործակցի կիրառմամբ սահմանել՝*

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

1. բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 200.000 դրամ:

գ/ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 60.000 դրամ:

գա/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր՝ եռամսյակի համար սահմանել՝

**հիմնական շինությունների ներսում՝**

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2.500 դրամ,
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.000 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40.000 դրամ,

**ոչ հիմնական շինությունների ներսում՝**

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ՝
բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.500 դրամ,
գ. 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.500 դրամ,
դ. 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,
ե. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,
զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 17.000 դրամ:

*1.6. Համայնքի տարածքում՝ 1-ին գոտում գտնվող առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/,*

*խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ 0.75 գործակցի կիրառմամբ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

ա/ ավտոյի օբյեկտների համար՝ 25 000 դրամ,
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000դրամ,
գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝200 000 դրամ,
դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

*1.7.* Համայնքի տարածքի 1-ին գոտում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը 0.75 գործակցի կիրառմամբ սահմանել՝

ա/ ակտիվային սփրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 դրամ.
բ/ թունդ ալկոհոլային /սփրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.500 դրամ.
գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,
դ/դատարկ գովազդային վահանակների համար՝ այլ արտաքին գովազդի համար սահմանված գումարի 25%-տոկոսի չափով:

1.8 Հայաստանի Հանրապետության Նոր Խարբերդ անվանումը ֆիրմային անվանում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 դրամ:

1.9 Համայնքի վարչական տարածքի 1-ին գոտում 0.3 գործակցի կիրառմամբ մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ սահմանել 10.000 դրամ՝

1.10 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 500.000 դրամ՝

1.11 Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝
ա/ 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 դրամ,
բ/ 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 դրամ,
գ/ 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 դրամ,
դ/ 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 դրամ:

*2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2018 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը*

2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:
2.2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման

աշխատանքների համար համայնքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.3. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

2.4. Համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:

2.5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,

բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

2.6 Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար սահմանել 5.000 դրամ:

2.7 Համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար սահմանել 3.000 դրամ:

2.8 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել 5.00 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32-Ն

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի աշխատավարձը 310.000 /երեք հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

2.Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված 1
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի N 32-Ն որոշման

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 37

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200.000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 130.000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 2 | 116.000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 204.000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/, /2.3-2/ | 2 | 195.000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/, /3.1-2/,/3.1-3/ | 3 | 140.000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/, /3.2-2/ | 2 | 130.000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/, /3.3-2/ | 2 | 120.000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Գործավար | 1 | 120.000 |
| Վարորդ | 1 | 106.000 |
| Պահակ | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Հարկահավաք | 2 | 110.000 |

| ԳՐԱԴԱՐԱՆ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Տնօրեն | 1 | 110.000 |
| Գրադարանավար | 2 | 80.000 |

| ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Տնօրեն | 1 | 120.000 |
| Գեղարվեստական մասի ղեկավար | 1 | 100.000 |
| Հրահանգիչ | 2 | 80.000 |
| Կազմակերպիչ | 1 | 80.000 |
| Կազմակերպիչ միջոցառումների լուսաբանման գծով | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 80.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Բանվոր | 1 | 80.000 |

| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ<br>/գյուղապետարանի պայմանագրային աշխատողներ/ | | |
|---|---|---|
| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
| Բանվոր | 2 | 74.074 |
| Բանվոր | 1 | 79.000 |
| Ավտոբուսի վարորդ | 2 | 80.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հավելված 2
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի N 32-Ն որոշման

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 21

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 165.000 |
| Դաստիարակ | 4 | 155.000 |
| Դաստիարակի օգնական | 4 | 85.000 |
| Երաժշտության դաստիարակ | 1 | 95.000 |
| Բուժքույր | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 79.000 |
| Հաշվապահ | 1 | 110.000 |
| Տնտեսվար | 1 | 74.000 |
| Խոհարար | 1 | 115.000 |
| Խոհարարի օգնական | 1 | 74.000 |
| Լվացարար | 1 | 74.000 |
| Պահակ, նորոգող բանվոր | 1 | 110.000 |
| Դռնապան | 1 | 74.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հավելված 3
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի N 32-Ն որոշման

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 20

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 120.000 |
| Ուսմասվար | 1 | 100.000 |
| Երաժշտության ուսուցիչ | 14 / 389 ժամ / | 1.307.070 |
| Հաշվապահ | 1 | 115.000 |
| Հավաքարար | 1 | 80.000 |
| Գործավար | 1 | 78.000 |
| Պահակ | 1 | 78.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ և 31-րդ հոդվածների պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2018 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի
Ավագանու 30.11.2017թվականի
Թիվ 33-Ն որոշման

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ...ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ...ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազ. դրամ

| Հ/Հ | Եկամտատեսակները | |
|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ, այդ թվում | 163562.940 |
| | 1. Հարկեր և տուրքեր, այդ թվում | 28155.610 |
| 1/1 | Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | 5334.289 |
| | Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 2062.445 |
| | Ֆիզիկական անձանցից | 1797.995 |
| | Իրավաբանական անձանցից | 264.450 |
| | Հողի հարկ, այդ թվում՝ | 3271.844 |
| | Ֆիզիկական անձանցից | 3253.635 |
| | Իրավաբանական անձանցից | 18.209 |
| 1/2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 21124.171 |
| 1/3 | Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում | |
| | Տեղական տուրքեր, որից՝ | 1697.150 |
| | Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | 120.000 |
| | Հիմնական շինությունների համար | 120.000 |
| | Ոչ հիմնական շինությունների համար | |
| | Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն | 0.000 |
| | Շինությունների քանդման թույլտվություն | 5.000 |
| | Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 247,200 |
| | Խմիչքների իրացման համար | 247,200 |
| | Հանրային սննդի օբյեկտների համար | 75.000 |
| | Վառելիքի վաճառքի համար | 150.000 |
| | Տեխնիկական հեղուկների վաճառքի | 45.000 |
| | Ժամը $24^{00}$ –ից հետո աշխատելու համար ,առևտրի կազմակերպում | 18,750 |
| | Արտաքին գովազդի համար | 729.000 |
| | Տաքսի ծառայության թույլտվության համար | 60.000 |
| 1/4 | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝ | |
| | Պետական տուրքեր, այդ թվում՝ | |
| | Զագս | |
| | Նոտար | |
| 1/5 | Այլ հարկային եկամուտներ / տույժեր և տուգանքներ/ | |
| | 2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 130247.6 |
| 2/5 | Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ | 130247.6 |
| | Նպատակային հատկացումներ /սուբվենցիա/ | 0.0 |
| | Պետ. բյուջեից համայնքի վարչ. բյուջեին տրամադրվող այլ դոտացիա | 0.0 |
| | 3. Այլ եկամուտներ, այդ թվում | 5159.730 |
| 3/3 | Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ | 139.730 |
| | Հողերի վարձակալություն | 139.730 |
| | Այլ գույքի վարձակալություն | |
| 3/4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ | - |
| | Պատվիրակված լիազորություններ | - |
| 3/5 | Վարչական գանձումներ, այդ թվում | 5020.0 |
| | Տեղական վճարներ | 5020.0 |
| | Աճուրդին մասնակցելու համար | 10.0 |
| | Շին.ավարտը փաստագրելու համար | 10.0 |
| | Աղբահանության վճար | 5000.0 |
| 3/6 | Մուտքեր տույժերից տուգանքներից, այդ թվում | |

| | | |
|---|---|---|
| 3/9 | Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթական այլ եկամուտներ | |
| | Վարչական իրավախախտումների համար | |
| | 4.Վարչական բյուջեի մնացորդ որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը | |

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

| | ԾՐԱԳԻՐ | 1.1.1. | 1.3.3 | 1.6.1 | 4.2.1 | 4.5.1 | 5.1.1 | 6.4.1 | 7,3,1, | 8.1.1 | 8.2.1 | 8.2.3 | 8.2.4 | 9.1.1 | 9.3.1 | 9.4.1 | 9.5.1 | 9.8.1 | 10.7.1 | 11.1.2. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՈԴՎԱԾ | ԱՆՎԱՆՈՒՄ | օր.գ. մար. | այլ.ծ առ. | ընդ.բն. հանր.ծ առ. | գյուղ. | ճան.տ. | աղբահ. | փող.լուս. | | համ.ս պ. | գրադ. | մշ.տ. | այլ.մշ.. | մանկ. | ն.ծ.կր | բ.մ.կր. | եր.դպ. | կրթուբ | սոց.պա | պահ.ֆ | |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 35812,4 | | 2472,0 | | 1000,0 | 2300,0 | | | | 3240,0 | 9360,0 | | | | | | | | | 54184,4 |
| 4112 | Պարգևատրումներ | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4211 | Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | | | 100,0 | | | | | | | | | | | | | | | | | 100,0 |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 1500,0 | | | | | | 2500,0 | | | | 3000,0 | | | | | | | | | 7000,0 |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 35,0 | | | | | 8500,0 | | | | | 60,0 | | | | | | | | | 8595,0 |
| 4214 | Կապի ծառայություններ | 500,0 | | | | | | | | | | 120,0 | | | | | | | | | 620,0 |
| 4221 | Ներքին գործուղումներ | 50,0 | | | | | | | | | | | | | | | | | | | 50,0 |
| 4232 | Համակարգչային ծառայություններ | | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4233 | Աշխատակազմի մասն. զարգ. ծառ. | 200,0 | | | | | | | | | | | | | | | | | | | 200,0 |
| 4234 | Տեղեկատվական ծառ. | 400,0 | | | 60,0 | | | | | | | | | | | | | | | | 460,0 |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառ. | | | 300,0 | | | | | | | | | 1000,0 | | | | | 450,0 | | | 1750,0 |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 200,0 | | 150,0 | 100,0 | | | | | | | 130,0 | | | | | | | | | 580,0 |
| 4252 | Մեքենաների և սարք. ընթ. նորոգում և պահպանում | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 400,0 | | | | | | | | | 50,0 | 50,0 | 100,0 | | | | | | | | 600,0 |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 750,0 | | | 150,0 | | | | | | | | | | | | | | | | 900,0 |
| 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 100,0 | | | | | | | | | | 50,0 | 150,0 | | | | | | | | 300,0 |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | | | | | 1000,0 | | 1000,0 | | 1000,0 | | | 900,0 | | | | | | | | 3900,0 |
| 4511 | Սուբսիդիաներ ոչ ֆին. պետ. կազմ. | | | | | | | | | | | | | 30000,0 | | | 18000,0 | | | | 48000,0 |
| 4726 | Հուղարկավորության նպաստներ բյուջեից | | | | | | | | | | | | | | | | | | 3000,0 | | 3000,0 |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | | | | | | | | 1500,0 | | | | | | 500,0 | 2000,0 | | | 4000,0 | | 8000,0 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4819 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | | | 650,0 | | | | | | 70,0 | | | | | | | | 400,0 | | | 1120,0 |
| 4823 | Պարտադիր վճարներ | 50,0 | | 200,0 | | | | | | | | | | | | | | | | | 250,0 |
| 4891 | Պահուստային միջոցներ | | | | | | | | | | | | | | | | | | | 22753,54 | 22753,54 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 40797,4 | 400,0 | 3872,0 | 310,0 | 2000,0 | 10800,0 | 3500,0 | 1500,0 | 1070,0 | 3290,0 | 12770,0 | 2150,0 | 30000,0 | 500,0 | 2000,0 | 18000,0 | 850,0 | 7000,0 | 22753,54 | 163562,94 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով համայնքի ավագանին ***որոշում է.***

Նոր Խարբերդ համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված Նոր Խարբերդ համայնքի
ավագանու 2017 թվականի 30 նոյեմբերի
N34-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական բյուջեի

1. 1.1.1. «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 125.0 հազար դրամ, այն ուղղելով 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածին:

2. 8.2.3. «Համայնքային մշակույթի և ազատ ժամանց» ծրագրի

ա) 4214 /կապի ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 20.0 հազար դրամ, այն ուղղելով 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածին,

բ) 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 542.680 հազար դրամ, այն ուղղելով 4111 /աշխատավարձ/ հոդվածին,

3. 1.6.1. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» ծրագրի 4823 /պարտադիր վճար/ հոդվածից պակասեցնել 136.0 հազար դրամ, այն ուղղելով 8.2.1. «Գրադարանային ծառայություններ» ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածին:

4. 11.1.2. «Պահուստային ֆոնդ» ծրագրի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 400.0 հազար դրամ, այն ուղղելով 6.4.1. «Փողոցների լուսավորում» ծրագրի 4239 «Ընդհանուր բնույթի ծառայություն» հոդվածին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ն

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Նոր Խարբերդ համայնքի գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով ,համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող 03-070-0230-0050 ծածկագրի տակ հաշվառված 5.72982 հեկտար, 03-070-0230-0041 ծածկագրի տակ հաշվառված 4.0 հեկտար գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահողերի հողամասերը վարձակալության և 03-070-0023-0018 ծածկագրի տակ հաշվառված 0.18595 եկտար բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը կառուցապատման իրավունքով:

2. Մրցութաին կարգով տրամադրվող հողամասերի վարձավճարի մեկնարկային գին սահմանել՝

ա/ 5.72982 հեկտար հողամասի համար՝ 150.580 /մեկ հարյուր հիսուն հազար հինգ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ,

բ/ 4.0 հեկտար հողամասի համար՝ 105.120 /մեկ հարյուր հինգ հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ:

գ/ 0.18595 հեկտար հողամասի համար՝ 6250 /վեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը կազմակերպել վարձակալության և կառուցապատման իրավունքով հողամասերի տրամադրման մրցույթ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով,Նոր Խարբերդ համայնքի գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով ։համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և բնակավայրերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի N 36-Ն որոշման

# ԱՂՅՈՒՍԱԿ

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /դրամ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0213-0038 | 1.06047 | գյուղատնտեսական | արոտավայր | — | 71.582 | չկա |
| 2 | Նոր Խարբերդ համայնք | գ. Նոր Խարբերդ | 03-070-0050-0010 | 0.07 | բնակավայրերի | — | այլ հողեր | 567.000 | չկա |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _______________ ՎԱՀԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով համայնքի ավագանին ***որոշում է.***

Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող, ըստ էլեկտրոնային քարտեզի 03-070-0002-0005 ծածկագրի տակ հաշվառված բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0.03545 հեկտար հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ
4. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
9. ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ